ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ  Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի  Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՈՐՈՇՈՒՄ
17-ը մայիսի, 2021թ., N18

ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 17.05.2021Թ. ԹԻՎ 07 ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով՝ ***համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Հայանիստ համայնքի ավագանու՝ 17.05.2021թ. թիվ 07 նիստի օրակարգը՝

1. Հայանիստ համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցման, Հայանիստ համայնքի գերեզմաններ տանող փողոցների ասֆալտապատման, Հայանիստ համայնքի համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգման 2021թ. աշխատանքների կատարման համար ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով հայտ ներկայացնելու մասին:
2. Հայանիստ համայնքի ավագանու՝ 2020 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 46 որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:

*Ավագանու անդամներ*
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Զորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Մկրտչյան Գեորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ
17.05.2021թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# ՈՐՈՇՈՒՄ

17-ը մայիսի, 2021թ., N19

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ, ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՐԵԶՄԱՆՆԵՐ ՏԱՆՈՂ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՄԱՆ, ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ 2021Թ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 25-րդ կետերի և 13-րդ հոդվածի 10-րդ կետի պահանջներով՝ <u>ավագանին</u> <u>որոշում է՝</u>

1.Հայանիստ համայնքի արտաքին լուսավորության ցանցի կառուցման, Հայանիստ համայնքի գերեզմաններ տանող փողոցների ասֆալտապատման, Հայանիստ համայնքի համայնքապետարանի վարչական շենքի տանիքի վերանորոգման 2021թ. աշխատանքների կատարման համար ներկայացնել հայտ ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ՝ սուբվենցիա ստանալու նպատակով:

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Ռազմիկ կողմ
2. Բեգլարյան Համլետ կողմ
3. Գրիգորյան Զորիկ կողմ
4. Գևորգյան Սարգիս կողմ
5. Կատանյան Լևոն կողմ
6. Մկրտչյան Գևորգի կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ

17.05.2021թ.
գ. Հայանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
Հ Ա Յ Ա Ն Ի Ս Տ Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

# ՈՐՈՇՈՒՄ

17-ը մայիսի, 2021թ., N20

## ՀԱՅԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԹԻՎ 46 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով՝ ***ավագանին որոշում է՝***

1.Հայանիստ համայնքի ավագանու՝ 2020թ. դեկտեմբերի 7-ի՝ «Հայանիստ համայնքի ղեկավարի՝ 2021թ. վարձատրության չափը որոշելու, Հայանիստի համայնքապետարանի աշխատակազմի և Մսուր-մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2021թ. թվաքանակը, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 46 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

<u>2) Որոշման 2-րդ կետով հաստատված հավելված 2-ի՝</u>
ա)1-ին կետի «12» թիվը՝ փոխարինել «13» թվով.
բ)2-րդ կետի 4-րդ տողի՝ հաստիքային միավորը սյունակում՝ «1.12» թիվը՝ փոխարինել «0.56» թվով, պաշտոնային դրույքաչափը սյունակում՝ «115.600» թիվը՝ փոխարինել «70.000» թվով.
գ)2-րդ կետի 4-րդ տողից հետո ավելացնել նոր տող՝ 5-րդ տողով՝ հաստիքի անվանումը, հաստիքային միավորը, պաշտոնային դրույքաչափը սյունակները լրացնելով համապատասխանաբար հետևյալ բովանդակությամբ՝
«5. «Մանկապարտեզի դաստիարակ», «0.56», «70.000»»:

*Ավագանու անդամներ՝*
1. Ալեքսանյան Ռազմիկ
2. Բեգլարյան Համլետ
3. Գրիգորյան Զորիկ
4. Գևորգյան Սարգիս
5. Կատանյան Լևոն
6. Մկրտչյան Գևորգի

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Բ. ՍԱՐԳՍՅԱՆ
17.05.2021թ.
գ. Հայանիստ